**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՏԱԿ ԳՅՈՒՂԻ
ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Սարատակ գյուղի բնակիչ Վարդ Հովսեփյանին անշարժ գույքի սեփականության իրավունքի 2003 թվականի օգոստոսի 15-ի N 1350965 վկայականով փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, գյուղ Սարատակ հասցեում գտնվող 0,062հա մակերեսով 08-105-0042-0019 կադաստրային ծածկագրով հողամասին և անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Սարատակ 1-ին փողոց 3-րդ նրբանցք 4 բնակելի տուն հասցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022 թվականի օգոստոսի 24



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 օգոստոսի 2022 թվականի N 650-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 թվականի ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 36-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հաղաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և հիմք ընդունելով Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի „Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին, թիվ 94-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյա համամասնությունները սահմանելու մասին 2022 թվականի հունվարի 26-ի թիվ 36-Ա որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2022 թվականի օգոստոսի 24

1. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 01, խումբ 1, դաս 1 <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>> տողի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<276,727.0>> թիվը փոխարինել <<288,727.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<372,627.0>> թիվը՝ <<384,627.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<499,251.0>> թիվը՝ <<511,251.0>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Տրանսպորտային նյութեր>> 4264 հոդվածի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<5,328.0>> թիվը փոխարինել <<12,328.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<7,828.0>> թիվը՝ <<14,828.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<10,328.0>> թիվը՝ <<17,328.0>> թվով: <<Վարչական սարքավորումներ>> 5122 հոդվածի <<2-րդ եռամսյակ>>, <<3-րդ եռամսյակ>> և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<7,341.1>> թիվը փոխարինել <<12,341.1>> թվով:
2. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 06, խումբ 4, դաս 1 <<Փողոցների լուսավորում>> տողի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<81,010.8>> թիվը փոխարինել <<88,116.8>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<93,175.8>> թիվը՝ <<101,281.8>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<104,880.8>> թիվը՝ <<112,986.8>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> 4251 հոդվածի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<2,173.7>> թիվը փոխարինել <<9,173.7>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<2,873.7>> թիվը՝ <<10,837.7>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<3,173.7>> թիվը՝ փոխարինել <<11,173.7>> թվով: <<Մասնագիտական ծառայություններ>> 4241 հոդվածի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<401.0>> թիվը փոխարինել <<507.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<416.0>> թիվը՝ <<522.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<431.0>> թիվը՝ <<537.0>> թվով:
3. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 09, խումբ 8, դաս 1 <<Կրթություն /այլ դասերին չպատկանող/>> տողի <<2-րդ եռամսյակ>>, <<3-րդ եռամսյակ>> և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<30,755.0>> թիվը փոխարինել <<30994.0>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Մասնագիտական ծառայություններ>> 4241 հոդվածի <<2-րդ եռամսյակ>>, <<3-րդ եռամսյակ>> և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<0>> թիվը փոխարինել <<239.0>> թվով:
4. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 06, խումբ 1, դաս 1 <<Բնակարանային շինարարություն>> տողի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<0>> թիվը փոխարինել <<32,885.6>> թվով, <<3-րդ եռամսյակ>> և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<0>> թիվը փոխարինել <<35,547.140>> թվով,

ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման << Շենքերի և շինությունների կառուցում>> 5112 հոդվածի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<0>> թիվը փոխարինել <<32,885.6>> թվով, <<3-րդ եռամսյակ>> և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<0>> թիվը փոխարինել <<35,547.140>> թվով:

5. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 06, խումբ 3, դաս 1 <<Ջրամատակարարում>> տողի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<16,950.0>> թիվը փոխարինել <<17350.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<23950.0>> թիվը՝ <<24,350.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<28,150.0>> թիվը՝ <<28,550.0>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Նախագծահետազոտական ծախսեր>> 5134 հոդվածի <<2-րդ եռամսյակ>>, <<3-րդ եռամսյակ>> և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<0>> թիվը փոխարինել <<400.0>> թվով:

6. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 11, խումբ 1, դաս 2 <<< համայնքների պահուստային ֆոնդ>> տողի և Ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Պահուստային միջոցներ>> 4891 հոդվածի <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<52,630.6>> թիվը փոխարինել <<0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<165,197.6>> թիվը՝ <<108,905.460>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<264,204.6>> թիվը՝ <<207,912.460>> թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՈՎԱՐ՝

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2022թվականի օգոստոսի 24





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 օգոստոսի 2022 թվականի N 651-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ԿԿԱՅԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՅԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՇԱՀԵՆ ԴԵՐԵՆԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԵՎ ՆԱԶԱՐԵԹ ԳՐԱԴԵՆԻԿԻ ԴԱՎԱՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 1419-Ն որոշման 12-րդ կետի 5-րդ ենթակետով և նույն որոշման 13-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալի 2022թվականի փետրվարի 2-ի թիվ ՊՆ/510-ԱԱ-4 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզից բնակարանի գնման վկայագրով բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերած շահառուների անվանացանկը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բնակարանային հաշվառումից հանել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ բնակարանային հաշվառման ամփոփ ցուցակում հաշվառված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից տրամադրված բնակարանի գնման վկայագրով բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զոհված (մահացած) ներքոհիշյալ զինծառայողների ընտանիքներին.
 - 1) Շահեն Դերենիկի Ներսիսյանի
 - 2) Նազարեթ Գրադենիկի Դավայանի
2. Շահեն Դերենիկի Ներսիսյանի և Նազարեթ Գրադենիկի Դավայանի ընտանիքներին օրենքով սահմանված կարգով իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով Շահեն Դերենիկի Ներսիսյանի և Նազարեթ Գրադենիկի Դավայանի ընտանիքներին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022թվականի օգոստոսի 24



(Handwritten signature)

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2022 թվականի N 652-Ա

2022 թվականի Օգոստոսի 26-ին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՅՈՒՅԹԻ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2022 թվականի օգոստոսի 26-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջին կարգի մասնագետների (ծածկագիր՝ 3.2-1, 3.2-2), գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-3), զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-5), կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-6), քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջին կարգի մասնագետների (ծածկագիր՝ 3.2-8, 3.2-9), աշխատակազմի առաջատար մասնագետների (ծածկագրեր՝ 3.2-10, 3.2-11, 3.2-12, 3.2-13, 3.2-14), թափուր տեղերի համար անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Արթիկ համայնքի ղեկավարի

2022թվականի օգոստոսի 25-ի N 652-Ա որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄԸ

1. Անտոնյան Արամ –Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ
2. Խաչատրյան Զորիկ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
3. Ոսկանյան Անանիկ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար
4. Մակեյան Վարդան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ
5. Վարդուհի Հովհաննիսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ
6. Արսեն Մամիկոնյան – Հայաստանի Հանրապետության <<Շիրակի մարզի Փանիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022թվական օգոստոսի 25



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ. կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2022 թվականի N 653-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆ
ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՄՈՒՇԵՂ ՀՐԱՆՏԻ ՄՆՈՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՄԵՍՏ ԶԱՎԵՆԻ ՄՆՈՅԱՆԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Նահապետավան գյուղի բնակիչներ Մուշեղ Հրանտի Մնոյանին և Համեստ Զավենի Մնոյանին 2003 թվականի հոկտեմբերի 14-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով N 23082022-08-0033 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, գյուղ Նահապետավան հասցեում գտնվող 0,167 հա մակերեսով 08-086-0029-0013 կադաստրային ծածկագրով հողամասին և շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Նահապետավան 9-րդ փողոց 7 բնակելի տուն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022 թվականի օգոստոսի 26



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2022 թվականի N 654-Ա

2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՅԿԱՅՎԵԼԻՔ ՄՐՅՈՒՅԹԻ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2022 թվականի օգոստոսի 29-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետների (ծածկագրեր՝ 3.3-1, 3.3-2, 3.3-3, 3.3-4, 3.3-5, 3.3-6, 3.3-7, 3.3-8, 3.3-9, 3.3-10, 3.3-11, 3.3-12, 3.3-13, 3.3-14, 3.3-15, 3.3-16, 3.3-17) թափուր տեղերի համար անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2022 թվականի օգոստոսի 26

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Արթիկ համայնքի ղեկավարի

2022թվականի օգոստոսի 26-ի N 654-Ա որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՅՈՒՅԹԻ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄԸ

1. Անտոնյան Արամ -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ
2. Համայակյան Ռոման- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
3. Ոսկանյան Անանիկ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար
4. Մակեյան Վարդան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ
5. Աստղիկ Պետրոսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ
6. Արսեն Մամիկոնյան - Հայաստանի Հանրապետության <<Շիրակի մարզի Փանիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022թվականի օգոստոսի 26



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2022 թվականի N 655-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՄՁԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ
ԲՆԱԿԻՉՆԵՐ ՊԵՏՐՈՍ ԱՐՄԵՆԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ 1/5, ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏԻՉԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ
1/5, ԺԱԿ ՊԵՏՐՈՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ 1/5, ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՍԱՇԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ 1/5 ԵՎ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԵՏՐՈՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ 1/5 ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ
ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Պեմզաշեն գյուղի բնակիչներ Պետրոս Արմենակի Ավետիսյանին 1/5, Թամարա Մկրտիչի Ավետիսյանին 1/5, Ժակ Պետրոսի Ավետիսյանին 1/5, Սահականուշ Սաշայի Ավետիսյանին 1/5 և Համբարձում Պետրոսի Ավետիսյանին 1/5 պատկանող 2021 թվականի օգոստոսի 12-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով /N 12082021-08-0024/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքի 1-ին փողոց 25 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացվող 0,07166հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Պեմզաշեն 1-ին փողոց 25 հողամաս հասցեն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Արթիկ քաղաքի բնակիչներ Պետրոս Արմենակի Ավետիսյանին 1/5, Թամարա Մկրտիչի Ավետիսյանին 1/5, Ժակ Պետրոսի Ավետիսյանին 1/5, Սահականուշ Սաշայի Ավետիսյանին 1/5 և Համբարձում Պետրոսի Ավետիսյանին 1/5 պատկանող 2021 թվականի օգոստոսի 12-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով /N 12082021-08-0024/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքի 1-ին փողոց 25 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացվող 0,04499հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Պեմզաշեն 1-ին փողոց 25/1 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022թվականի օգոստոսի 26



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ. կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2022 թվականի N 656-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ
ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ԼԻՊԱՐԻՏԻ ԶԱՐԶԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Գևորգ Լիպարիտի Չարչյանի (ծնված 1955 թվականի ապրիլի 30-ին, անձնագիր AN 0526474 տրված 2013 թվականի հունիսի 19-ին 028-ի կողմից) 2022 թվականի օգոստոսի 18-ի N 3712 դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Չայիրների>> տարածքի սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.1403499 վկայական) իրեն պատկանող 0,22561 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 08-ին N 1087-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի էլեկտրոնային կադաստրային քարտեզի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի <<Չայիրների>> տարածքի հողամասը (գտնվում է 08-002-0288- կադաստրային տարածքում) համարվում է հատուկ պահպանվող նպատակային նշանակության և հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հող:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի հ.1731-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասը գտնվում է հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողերի /կատեգորիայի/, հանգստի համար նախատեսված գոտում: Միևնույն ժամանակ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N1403499 վկայականում քննարկվող հողամասի նպատակային նշանակությունը ամրագրված է հանգստի համար նախատեսված, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ անօգտագործելի հողատարածք հանգստի գոտի ստեղծելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով, 8-րդ մասի 1-ի կետով և 10-րդ հոդվածի 3-րդ մասով,

<<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածի 12-րդ մասով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով, 24-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1731-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 27-ի թիվ 51-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1731-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի 0,2500 հա մակերեսով <<Չայիրների>> տարածքը, որը սեփականության իրավունքով պատկանում է Գևորգ Լիպարիտի Չարչյանին՝ նպատակային նշանակությունը սահմանել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակությամբ հողերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ սահմանել հանգստի համար նախատեսված կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները ենթակա են պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Լիպարիտի Չարչյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
5. Կատարված փոփոխությունը արտացոլել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի տարեկան ընթացիկ հաշվառման հողային հաշվեկշռում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՎԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022թվականի օգոստոսի 26



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 657-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՍԱՐԱՏԱԿ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 106 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՅԻՄ ԼԵՎՈՆԻԿԻ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 8-րդ կետով, 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերով և հիմք ընդունելով Գեյիմ Լևոնիկի Տեր-Գրիգորյանի (ծնված 1987 թվականի ապրիլի 26-ին) 2022 թվականի հունիսի 30-ի N 3002 դիմումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2011 թվականի նոյեմբերի 23-ի N 2859295 վկայականը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի գյուղ Սարատակ 1-ին փողոց 106 հասցեում գտնվող Գեյիմ Լևոնիկի Տեր-Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող, 08-105-0001-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում ինքնակամ կառուցված 62,42քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, 37,080քմ արտաքին մակերեսով ավտովագման կետը և 2,09քմ արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:
- Ընդունել ի գիտություն, որ
 - Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը ամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
 - Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
- Սահմանել, որ սեփականատերը
 - Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջեի 900205101125 հաշվին պետք է վճարի 202455(երկու հարյուր երկու հազար չորս հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:
 - Իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
- 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գեյիմ Լևոնիկի Տեր-Գրիգորյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022 թվականի օգոստոսի 29



[Handwritten signature]

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 658-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-105-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԱՐԱՏԱԿ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 106/1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ գյուղի 1-ին փողոց 106/1 հասցեում գտնվող ավտոտեխսպասարկման կայանը կառուցվել է Գեյիմ Լևոնիկի Տեր-Գրիգորյանի կողմից և նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի գյուղ Սարատակ 1-ին փողոց 106/1 հասցեում գտնվող հողամասում կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական, կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 53-րդ կետով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության 731-ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող 08-105-0001- կադաստրային ծածկագրով 0,00737հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Սարատակ 1-ին փողոց 106/1 ավտոտեխսպասարկման կայան հասցեն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ Սարատակ 1-ին փողոց 106/1 հասցեում գտնվող հողամասում կառուցված 15,64քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությանը, 3,86քմ արտաքին մակերեսով պարսպին և 19,12քմ արտաքին մակերեսով ավտոտեխսպասարկման կայան գործառնական նշանակությամբ ինքնակամ

կառույցը համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը և այն ճանաչել օրինական /կցվում է հողամասի և շինության հատակագիծը/:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցի և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու գրավոր առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Գեյիմ Լևոնիկի Տեր-Գրիգորյանի /ծնված 1987թվականի ապրիլի 26-ին, անձնագիր AU0236874, տրված 2021թվականի ապրիլի 19-ին/:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արթիկ համայնք,
2022թվականի օգոստոսի 29



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ. 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ. կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 659-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ
ԲՆԱԿԻՉ ԼԵՎՈՆ ԳԱԼՈՒՍՏԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ
ՄԵԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեսուրսի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաքի բնակիչ Լևոն Գալուստի Տոնոյանին պատկանող 2020 թվականի մարտի 12-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով /N 22082022-08-0024/ փաստագրված Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ Անկախության փողոց 40/7 հասցեում գտնվող խանութին և Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաքի բնակիչ Լևոն Գալուստի Տոնոյանին պատկանող 2022 թվականի հունիսի 06-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով /N 06062022-08-0020/ փաստագրված Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ Անկախության փողոց 40/6 հասցեում գտնվող խանութին տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաք Անկախության փողոց 40/7 խանութ հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արթիկ համայնք,
2022 թվականի օգոստոսի 29



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 օգոստոսի 2022 թվականի N 660-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԲԱՔԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 36 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԼՈՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի բնակիչ Ֆլորիկ Հովհաննեսի Խաչատրյանի (ծնված 1940 թվականի դեկտեմբերի 08-ին) 2022 թվականի օգոստոսի 23-ին N 3812 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Բաբաջանյան փողոց 36 հասցեում գտնվող 08-002-0164-0046 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,06000 հա, որից 0,0530 հա մակերեսով հողամասը Ֆլորիկ Հովհաննեսի Խաչատրյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 0,0070 հա մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, /1984 թվականի հուլիսի 30-ի տեխնիկական անձնագիր/ և Ֆլորիկ Հովհաննեսի Խաչատրյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեսուրսի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 53-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Նիզամու փողոց 22ա հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաք Բաբաջանյան փողոց 36 բնակելի տուն:

2. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաք Բաբաջանյան փողոց 36 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ֆլորիկ Հովհաննեսի

Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,0530 հա մակերեսով հողամասին կից 0,0070 հա մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0,0600 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքապետարանի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ֆլորիկ Հովհաննեսի Խաչատրյանի օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
2022թվականի օգոստոսի 29